


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԲԱԳՐԻ Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզի-գտի համար տեղի. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեանն ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԻԹԵՐ

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄԻ ԶՈՂ(1)

Իրիկուն մը, ճաշէն ետք, սիկառ մը ամենուն շրթունքին տակ, առիթն անդիլին կը խօսակցէինք, երբ կարգը եկաւ խնդրոյ մը որուն համար մեզանի հեղեղներ թափուած են:

Այդ խնդիրն է մարդաթափութիւնը (dépoulement):

—Հաւատացէ՛ք որ, ըսաւ մեր մէջէն եւրիտասարդ մը, ես ալ պատրաստ եմ իմ կարողութեան չափով աշխատիլ բաշմամարդութեան համար, և իմ յանդանքս չէ՝ եթէ մինչեւ այսօր չեմ ամուսնացած. ինծի աղջիկ տուող չկայ:

Այս բառերն արտասանողը փառաւոր կաշմուածքով, բանիմաց դէմքով և առողջ տեսքով երիտասարդ մըն էր, չնայելով տղայ մը վերջապէս:

—Ի՞նչպէս, ձեզի աղջիկ տուող չկայ. բայց կերեւայ թէ բարձր տեղուանք աչք ունիք և կամ շատ ծայրայեղ են ձեր յաւակնութիւնները:

—Հիմա պիտի տեսնէք: Քսանըվեց տաւրու եմ, և բարիզեան նոտարի մը քով գրաւորութեամբ կը գործիմ: Առ այժմ ամիսը 300 ֆրանք կը վաստակիմ, բայց կամաց կամաց կընամ առաջանալ և անշուշտ օրին մէկը առաջին գրագրի պաշտօնին պիտի հասնիմ. և կարծեմ թէ այդ օրը շատ հեռու չէ:

«Ամեն անգամ որ տուն կը մտնեմ, կրնան մը ժպտուն դէմքը չի տեսնելուս համար ահագին կերպով կը ձանձրանամ. ճաշարաններու կերակուրները նողկանք ազդել կ'սկսին. ոչ գարեջրատուններէ կախորժիմ և ոչ ճաշարաններէ:

«Միակութիւնը այնքան ծանր կուգար ինծի որ միտքս դրի ամուսնանալ և ինծի յարմար աղջիկ մը վնասելու ելայ:

«Իրաւ է որ տարին 3600 ֆրանքը մեծ նշանակութիւն չունի Բարիզի պէս քաղաքի մը մէջ: Բայց, վերջապէս, երկու հոգիի հա-

մար բաւական դումար մըն է, և ես աղէկ դիտեմ որ շատ մը պատուաւոր մարդիկ աղէկ պակասով ալ կրնան ապրիլ: Միւս կողմէ ներքի էր ինծի յուսալ թէ առնելը կրնա հետը բան մը բերելով այդ եկամուտը կընար քիչ մը աւելնալ և այսպէսով գործերնս պիտի շտկէինք սպասելով որ ամսական կըրկնապատկուէր:

«Կերպնում որ պրանչի տրամադրու-
թիւններ ունէի ամուսնութեանն ինդիրը ձեռք առած միջոցիս: Իմ հաստատ դիտաւորու-
թիւնս էր կարելի եղածին չափ երջանիկ ը-
նել առնելը կրնա:

«Ես կրնը միշտ նկատած եմ իբրեւ է-
րիկ մարդուն հաւասար էակ մը: Սպասուհի մը ունենալու նպատակով չէր որ ամուսնանալ կուզէի. փնտռածս կրն մը չէր որ աղէկ պի-
թէք եմբել դիտար և կամ բաճկոնիս կո-
ճակները կարելու կարող ըլլար: Ինծի կը թուէր որ կրնա տանը ինամքները տարած առնել պիտի կրնար նաեւ սրտակից ընկերու-
հիս և միւսնոյն առնել բարեկամուհիս դառնալ:

«Գեղեցիկ երազներ կընէի:

«Օրին մէկը սիրտս բացի բարեկամուհի-
ներէս մէկուն և համարձակօրէն իրեն յայտ-
նեցի ամուսնանալու դիտաւորութիւնս:

«Շատ բաղդաւոր ես, պատասխանեց, ա-
ղէկ որ ըսիր, բարձրաստիճան սպայ մը փեսայ մը փնտռելու վրայ է աղջկանը համար, ճիշդ-
քու ուզածդ է: Գեղեցիկ աղջիկ մըն է որ պրանչի կերպով դաշնակ կը զարնէ և հիա-
նայի կրթութիւն մը առած է:

«Լաւագոյնը փնտռել չէր միտքս: Հետեւ-
աբար խնդրեցի բարեկամուհիս որ այդ աղ-
ջկան ձեռքը հօրմէն խնդրէ:

«Բանի մը շարժումներ անցան. այդ մի-
ջոցին աղջկան հայրը իմ վրաս տեղեկութիւն-
ներ հարցուցած էր ամեն կողմ: Կերեւայ թէ իր խուզարկութիւններուն արդիւնքը նպաս-
տաւոր եղած էր ինձ համար, որովհետեւ օր մը զիս իր քով կանչել տուաւ ապագայ ա-
նեւս և սա լեզուաւ սկսաւ խօսիլ:

«Սիրելի Պարոն, ըսաւ, դուք ամիսը 300 ֆրանք կը շահէք, լաւ, բայց աղջկիս 40,000 ֆրանք գրամոծիտ ունի, հետեւաբար չեմ կրնար ձեզ կնութեան տալ և վերջապէս աղ-
ջկիս նոտարի գրագրի մը կրնը չի կրնար ըլլալ:

«Ներեցէ՛ք որ դիտել տամ ձեզի թէ աշխարհիս վրայ գէշ գործ չկայ, միայն անոնք գէշ են որոնցմով մարդ չի կրնար ապրեցնել

իր ընտանիքը: Փոխանակ գրագիր ըլլալու ե-
թէ ես ինքս նոտար ըլլայի, կը կարծէք որ ձեր աղջիկը աւելի՞ երջանիկ պիտի ըլլար. դուք նախապաշարումի մը կը զօհէք թէ՛ ձեր աղ-
ջիկը և թէ՛ զիս:

«Շատ աղէկ, պատասխանեց. եթէ այդ-
պէս է, տարի մը եւս սպասեցէ՛ք, այն առնել առաջին գրագիր կըլլաք և առաջին գրագիր մը գրեթէ նոտար ըսել է:

«Բայց, առաջին գրագիր ըլլալու հա-
մար, այդ տեղը բաց ըլլալու է և այդ պա-
տահականութիւնը իրականանալու համար քանի մը տարիներ սպասելու է. և որովհետեւ միջեւ որ այդ օրը գայ, առած ամուսնանովս շատ պատուաւոր կերպով կրնամք ապրիլ, ինչո՞ւ հա-
մար չէք ուզեր որ ընտանիք մը կազմուի ո-
րուն նպատակը պիտի ըլլայ ձեզի սիրուն թոռ-
ներ հասցնել:

«Երբէք բարձրաստիճան սպայի մը աղ-
ջիկը 300 ֆրանքնոց մարդու մը կրն չի կըր-
նար ըլլալ:

«Հասկցայ որ ճար չկար և ամուսնանալու դադափարէս ետ կեցայ. բայց այդ որոշումէս փրանսան պիտի տուէ՛ք եղբր, յանդանքը ի՞մա է օ»:

Կէս մը խնդալով, կէս մըն ալ ոխուր կերպով իր պատմութիւնը վերջացուց:

Երբ դիպումսը այսպիսի խոստովանու-
թիւններու ունկնդիր ընել կուտայ զիս, ես ինծի կը հարցնեմ թէ արդեօք անկլօսաբ-
աններու սխալները լաւագոյնը չէ՞:

Եւրոպայի ամեն հիւսիսային երկրներու մէջ երիտասարդները և աղջիկները զիրար կընտրեն միմիայն զիրար սիրելուն համար. և երբ ապահով են իրենց փոխադարձ սիրոյն վրայ, իրենց հօրը կը դիմեն և պարզապէս կըսեն:

—Ձերար կը սիրենք կոր, ամուսնացու-
ցէ՛ք զմեզ:

Հայրերը սովորաբար ընդդիմութիւն չեն ընեն. եթէ ընեն իսկ, պիտեն որ բանի մը չի պիտի ծառայէ, որովհետեւ մանչն ու աղջիկը ազատ են անոնց ականջ չի դնելու քանի որ խնդիրը իրենցմէ զատ ոչ ոքի կը վերաբերի. ամուսնացողները իրենք են:

Չաւակներ կրնան ունենալ և ասորք պի-
տի մեծնան ինչպէս որ ըլլայ, բաւական է որ զանոնք յանձնեն խնամոյրը այն Աստուծոյն որ «տայ կեր թռչնոց ձագերուն»:

ՖՐԱՆՍԻՍԻ ՍԱՐՍԷՑ

(1) Ծ. Խ. Ֆրանսիսը Սարսէյի հաճելի ու փորձ գրչէն ելած այն ընտանի յօդուածը որ կը վերա-
բերի ընկերային ամենէն կենսական խնդրոյն, ամուս-
նութեան, կարծէ որ ուղադրութեան առնուի նաեւ
մեր մէջ, ուր այնքան պէտք ունինք ամուսնութիւն-
ները դիւրացնելու և նոր սերունդները բազմացնելու:

Կ. ՊՈԼՍԵՆ ԼՈՒՐԵՐ

Արմենաստի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ թէ աստիկանութիւնը արգիւր է գաւառներէն եկող հայերուն կամ անոնց որոնց ընտանիքը հետեւին չի գտնուիր, մայրաքաղաքը բնակիլ. բացառութիւն պիտի ըլլայ անոնց համար միայն զորս իր երաշխաւորութեան տակ առնէ Պատրիարքը:

—Թայվին Կ. Պոլսոյ թղթակիցը կը պատմէ թէ իր սպասարարը, ծերունի հայ մը, տիրոջը նաւակները թղթատարին յանձնելու համար Թարապիսէն Բերա գաւառէ աստեղծ ձերբակալուեր ու բանտ նետուեր է: Անգլիական հիւպատոսարանին ազգու միջամտութեան շնորհիւ միայն ազատուեր է խեղճ մարդը: Զեռքը գտնուած նամակները որոնք բացուեր էին, Թայվին թղթակիցին վերագրածուեր են աստիկանութեան կողմէ, ներողութիւն խնդրող նաւակով մը:

—Մուրատ պէյի տնհետացման վերաբերող լուրերը անորոշ կը մնան: Ստոյգ չի գիտցուիր տակաւին թէ Միգանի նախկին խմբագիրը փախած է Պոլսէն թէ արտորուած է: Դեպքաններէ ոմանք հետամուտ են եղեր իրողութիւնն ստուգելու:

—Մովսիսի նախարարը պէտք եղած հրամանները տուեր է որպէսզի իրենց տեղերը շրջուին Սեւ ծովու եզերաց քաղաքներէն եկող պահեստի ծովային զինուորները. ըստ այսմ, Տարտանէլ գտնուող նաւատորմին հրամանատարն սկսեր է արձակել զանոնք: Իսկ իզմիրի նաւահանգիստը գտնուող նաւատորմին զօրքերը տակաւին ժամանակ մը պիտի պահուին գործօն վիճակի մէջ:

—Եւրոպական թերթերն հետեւեալ հեռագիրը կը հրատարակեն Կ. Պոլսէն:

«Մայիսմաք քաղաքը կը ծանուցանէ թէ Սուլթանը իր գահակալութեան տարեգարձին առթիւ ներուժ շնորհեր է քաղաքական յանձնարարողը զատապարտուածներուն»:

ՔՈՒՐԲԵՒՊԱՐՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԻՒՆ ՎՐԱՅ

Թուրքեպարսկական սահմանադրին վրայ կատարուած արշաւանքի մասին եւրոպական մամուլին մէջ հրատարակուած նորագոյն տեղեկութիւններն հակասական են. թերթեր կան որոնք նշանակութենէ զուրկ կը համարին զայն և թերթեր որոնք հակառակը կը մտածեն: Այսպէս, Բոյիթիշէ Բորեսքոսէնէմին թղթակիցը կը գրէ.

Վանայ նահանգի սահմանադրին վրայ սլաւոն հաճ վերջին դէպքերու մասին վստահութեան արժանի աղբիւրէ առնուած լուրերու նայելով, անոնց հեղինակները հայեր չեն: Արդէն, մինչեւ ցարդ Դուռը այս առթիւ ոեւէ զիտողութիւն չ'ուղղեց Հայոց Պատրիարքարանին: Միայն թէ Պատրիարքը հրահանգ տուաւ Վանայ առաջնորդին՝ մտքերն հանդարտեցնող շրջաբերական մը կարգապահել տալ իր թեմի եկեղեցիներուն մէջ:

Տեղիի նիւզը, ընդհակառակն, հետեւեալը կը հրատարակէ.

Դաւթբէկն մանրամասն տեղեկութիւններ առնուած են՝ Պարսկաստանէն եկող հայերուն քիւրտերու վրայ կատարած յարձակումի մասին: Ասոնք 300 հոգի են եղեր, օգոստոս Թին անցան սահմանադրուի ու յանկարծակիի բերին թշնամիները որոնք վրաններու տակ հաստատուած էին: Անոնցմէ 300էն 600 հոգի (թիւր ճշգրտած չէ) սպաննեցին կամ վիրաւորեցին. մեռածներուն մէջ կը գտնուի Համիտիէ հեծեալագունդին հրամանատարներէն Շէրիֆ աղա:

Այս չափատակութիւնէն ետք, հայերը՝ որոնք իրենցմէ քան հոգի միայն կորսնցուցած էին, լեռները բաշտեցան: Կը հերքեն այն զրոյց թէ իրենք կիներ ու տղաքներ ջարդած ըլլան. կըսեն թէ կարեւոր թուղթեր ձեռք անցուցած են:

Պարսիկ իշխանութիւնք միջոցներ ձեռք առին սպառազանքի մէջ այս տեսակ արշաւանքներու կրկնումն արգիլելու համար:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Օրումն կարեւորագոյն դեպքն է, Եգիպտոսի համար, Պերսիի առումը անգլիէ-գիպսական բանակին կողմէ:

1822ին, մեծանուն Մեհմէտ Ալի կը ձեռնարկէր Սոսանի արշաւանքին որ Փարաւոններու երկրին միացուց ընդարձակածաւայ ու հարուս նահանգներ: Եօրանատնիքին գաւի ետք, նոյն արշաւանքը կը վերսկսուի ու յաջողապէս առաջ կը տարուի: Հազիւ երկու ամիս կայ որ Քիլիկի վաշայի հրահանգստարարեան ներքեւ գտնուող բանակը կը գրաւէր Ապու Համասը, այսօր նոյն յաջողութիւնը կը տեսնուի Պերսիի վրայ եւ կարգը պիտի գայ Խարքումի:

Պերսիի առումն եղանակը — ամեն հաւանականութիւն պահելով, — կերպով մը կը յիշեցունէ յունեքսոքական պատերազմի այն պարագայները երբ հեղին գործն ու ժողովուրդը իրենց դիրքերը ձգեցին փախան թշնամիին առջեւ որ սիրեց անոնց: Անգլիէ-գիպսական բանակը դեռ Ապու Համաս կը գտնուէր, երբ արդէն իսկ սերվիլները խոյս կուտային Պերսիէն ուր նախել առաջ մեծան Ապիսի-Ագիւմ շէյխին ցեղակիցները եւ գրաւեցին ցորենի մթերանոցները յանուն ե-գիպսական կառավարութեան. շատ լանցած հրեքներ փաշա կը հասներ իր գործերով ուրոմ եգիպսական դրօշը կը պարզէին քաղաքին վրայ: Ինչպէս կը տեսնուի, այս յաջողութեան համար անոնց արիւնքները քան Պերսիի սերվիլները Մեքէմէ հաւանականութեամբ են ուրիշ ապստամբ ցեղերու հետ:

Այս վերջին քաղաքը տեսնուեմ տարիէ ի վեր սերվիլներուն ձեռքը կը գտնուի, եւ անմիջական կարեւորութիւն ունի Խարքումէ ետք որ Սոսանի մայրաքաղաքն է: Բնակիչներուն քիւր կը հասնի 10,000ի. առեւտրական կեդրոն մըն է ուսկից կը մեկնին Ապու Համաս, Բորոսֆո եւ Սոսանի գաղտնաբեր կարաւանները:

Այս վայրկեանիս որոշ չի գիտցուիր քեւ պարսկապէս պիտի շարունակէ՞ իր յառաջադրանքները դեպ ի Մեքէմէ ու Խարքում, քեւ ոչ Պերսիի անհաջողութեան պիտի շարունակէ, յառաջիկայ տարիին վերապահելով զինուորական նոր գործողութիւն մը: Ամեն պարագայի մէջ, Պերսիի գրաւումը ոչ միայն իր քաղաքական նշանակութիւնն ունի Եգիպտոսի համար, այլեւ երկրին վաճառականութեան առջեւ կը բանալ մեծ առաքանք:

ԳՐԶԻ ՔՍԱՆԱՃՈՅԲ

ՌԱՄՍԵՍ ԱՌ ՕՍԻՐԻՍ

«Դժբաղդութիւն մը երբեք միեակե չի գար» կըսեն շատ մը խելացի ազգեր:

Որքան իրաւունք ունին եղեր, Օսիրիս: Իբր թէ վերջին ազգային դժբաղդութիւնները բաւական չըլլային. ջարդերը, կոտորածները, կրօնափոխութիւնները, գաղթականութիւնները կարծես քիչ եկան, հիմակ ալ, շատ մը հայեր, բարոյական մեծ հարուած մը տալ կուզէին հայութեան՝ իրենց ծաղրելի անուանափոխութեամբ:

Իրենց անունին ետեւ թրիատողներէն ետքը կորցը անունին պաշտօնակապնեղներուն եկաւ:

Նախատեսները ասոնց բով պղտիկ սուրբեր են ինձ համար:

Մտիկ ըրէ՝ հիւսյ:

Պոլսոյ ատամնարդժներէն մէկը իր անունը անգլիացուցեր է. փոխանակ Խաչատուրեան կոչուելու Hatchadoorson կատարապէս, Խաչատուրեան, կիւմանա՞ն:

Իրաւ որ, չեմ գիտեր թէ այս թեթեւութեան հանգէպ խնդար պէտք է թէ լալ:

Կերեւայ թէ անուններու մասնիկները ակուաներու նմանցուցած է լինուելու այդ ասպետը, և իր արհեստին բերմամբ ճշմարիտները արմատախիլ ըրած է անոնց տեղ կեղծեր դնելու համար:

Մինչեւ իսկ ամերիկեան անցագիր մը բուռահան չպիտի ըլլար արդարացնելու համար այդ անուանափոխութիւնը: Եթէ այդպէս ըլլար, ամեն հայ իրաւունք պիտի ունենար իր անունը փոխելու՝ բնական երկրին, հպատակութեան տեսակին և կամ ճշշակին համեմատ:

Նոր Բարեւոյնի մը հիմնարկութիւնը պիտի ըլլար ասիկայ:

Եթէ ամեն մարդ ատամնարդժական ձգտումներ ունենար, այսօր Եգիպտոս բնակող հայ մը իր անունը պիտի կրնար Ապու Գիրգոր կամ Իպիկ Սարգիսի վերածել, վիճենա բնակողները պիտի ըլլային ճուղքափոխ, Բարիկ ապրողները պիտի ստորագրէին օրինակի համար, Léon Apcard և կամ Serge Quarabette, ուսական ճաշակ ունեցողներ պիտի սիրէին կոչուիլ Գիրգորֆ կամ Ակորովիչ, Պոլիս մնացողները պիտի յորջորջուէին Գիրգոր օգու և Սարգիս օգու, անգլիական հպատակները Սարգիս, սըն և երբեմն ալ Ակորովիճ: Աթէնքի մէջ ապաստանողները մէյմէյ Սէրգիսիատի և կամ Մարտի. բոսօրու պիտի ըլլային:

Փառք Աստուծոյ որ Սպանիոյ մէջ շատ հայեր չկան, ապա թէ ոչ եթէ ասոնցմէ մին Պոլիս երթալով ամուսնանար, սա տեսակ հրաւիրաբեր ստանալու պիտի արժանանային իր բարեկամներ:

«Տիար եւ Տիկին այսինչեան պատիւ ունին ձեզ ծանուցանելու իրենց աղջկան Պիսոսի ամուսնութիւնն ընդ»

Son Ակորու-սէլ-Սարգիս-ի-Պաղասապա-սէլու Քաթիկոս ի Մարգար:

Այդ օրերն ալ պիտի տեսներ, մի՞ յուսահատիր:

Բայց խնդալ չեմ կրնար զսպել սիրելի Օսիրիս, երբ կը մտածեմ թէ սա մեր Այվազեանն ալ կրնայ օրին մէկը Օտէսա երթալ և ստիպուիլ անունը ուսանելու:

Ես գրաւ կը դնեմ որ անմիջապէս Արարհամ Այվազեանը պիտի ըլլայ Ապրահամ Այվազովսկի: Աշխատանքները նկարչին հետ համաձայն, օհ, ինչ բաղդ:

Այվազեանը՝ Այվազովսկի, տարբերութիւնը մեծ չէ. քանի որ ստղծագիրը գրագէտն ալ... պարսէր կը չինէ, սովորական մահախանգուի մը պէս:

ՌԱՏԱՄԷԹ

ՌՈՒՍԱԶԱՅ ԶՕՐԱՎԱՐԻ ՄԷ ՄԱՀԸ

Արձագանքի օգոստոս 13ի թիւին մէջ կը կարդանք.

Երէկ հողին յանձնեցին Վանքի մայր եկեղեցու բակում, հանգուցեալ հայազգի զենեւալ Ստեփան Յովսէփեան Քիլիկիեանի մարմինը՝ հանգուցեալի աստիճանի պահանջած բոլոր զինուորական յարգանքներով: Թաղման ներկայ լինելու համար Կօլօրից Թիֆլիզէր ժամանել երկրիս կառավարչապետ իշխան Գոլիցին որ և հետեւում էր հանգուցեալի դադաղին: Ներկայ էին հանգուցեալի զինուորական պաշտօնակիցները, բազմաթիւ պետական և հասարակական պաշտօնեայք, Թիֆլիզի համայնքները իրենց դրօշակներով և ահագին բազմութիւն ժողովրդեան:

Հանգուցեալը ծնուել էր 1833 թուի յուլիսի 10ին Թիֆլիզում: Սկզբնական կրթութիւնն ստանալով Խ. Աբովեանի մասնաւոր

պանսիօնում, ապա մտաւ Մոսկուայի համալսարանը՝ իրաւագիտական կանոնադրութեան կուրսով: Համալսարանի արտօնելուց յետոյ Ս. Յ. Բիշկոյեան ստացաւ մասնագիտական գիտնորական ուսումնական գիտնորական շտաբի նիկոլայեւսկայա ճամբարանում և ապա մտաւ գիտնորական ծառայութեան 1850 թուին: 1865-ից մինչեւ 1871 թիւը նա Կովկասեան գիտնորական շտաբի պաշտօնեայ էր և երկրի մէջ գիտնորների տեղափոխութեանց կառավարիչն էր. իսկ յետոյ նշանակուեց ի կարգադրութիւն Կովկասեան զօրաց հրամանատարի և մինչեւ 1887 թիւը պաշտօն էր վարում. Կովկասեան զօրաբանակում:

Հանգուցեալը 1866 թուականին առանձին յանձնարարութեամբ ուղարկուեց Թիւրքիա: 1877 թուին Արտահանի առմանը մասնակցելու համար արժանացաւ Բարձրագոյն պարգևի — ոսկի զէնքի. Ղարսը վերցնելուց յետոյ, ստացաւ գիտնորաւմայորի աստիճան. իսկ 1888-ին գեներալ-լէյտէնանտ եղաւ: Բազմամիջ շքանշանների թուում հանգուցեալը պարգևատրուած էր նաեւ «Սպիտակ Արծիւի» շքանշանով: Չնայելով իւր բազմազբաղ պաշտօնի ծանրութեանը, հանգուցեալը զբաղվում էր և պատմական գրականութեամբ: Նա գրել է «1877—1878 թ. պատերազմը Թիւրքաց Հայաստանում», «Նազիր Շահի արշաւանքները Հէրաթ, Կանդահար, Հնդկաստան և նրա մահից յետոյ պատահած անցքերը»: Մնացել են և անտիպ աշխատութիւններ «Ձինւորական շտաբի օֆիցերների յիշողութիւններ» և «Վրաց թագաւորութեան վերջին օրերը»:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Հաւանաբար Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին այս աշնան Երուսաղէմ այցելեն: Հռէնձոյէրն զբօսանաւն այս նպատակով յարգարուելու և պատրաստուելու վրայ է եղեր Գիլի նաւարանին մէջ:

— Թուրքիոյ և Յունաստանի միջեւ հաշտութեան կնքումը մտաւորաւ ցցունող հեռագիրներ հասան երէկ և նախընթաց օր, միայն թէ վաղը նոր դժուարութիւններ չի ծագին դարձեալ, ինչպէս պատահեցաւ քանիցս: Առաջին լուրը եկաւ Բեդրասպուրէնէ, սեպտ. 8 թուականով, որ կը հաւաստէր թէ հաշտութեան նախնական պայմանները պիտի կրնալին անմիջական կերպով, և թէ Պանք 0-թօմանը պատրաստ է վճարելու պատերազմական տուգանքին քառորդ մասը: Միւս կողմէ, Աթէնքի թերթերը վերջնապէս ընդունուած կը նկատեն ելմտական քննութիւնի առաջարկը: Հելլէն խորհրդարանը պիտի գումարուի վաւերացնելու համար այն հասոյթներու նշանակումը որոնք կը յատկացուին կրնալին փոխառութեան:

— Սպանիոյ նախարարաց խորհուրդը լըրջօրէն նկատողութեան առած է Քուպայի և Ֆիլիպինների կղզիներուն մէջ բարենորոգումներ ներմուծելու հարցը: Մատրիտի կառավարական շրջանակներուն մէջ սա համոզումը կը տիրէ թէ առանց անոնց գործադրութեան անկարելի է վերջ մը դնել ապստամբական շարժման:

— Բեդրասպուրի պաշտօնաթերթը կը ծանուցանէ թէ քուբերան համաճարակ հանգամանք մը առնել սկսած է ի Պոմպէյ, ուր յուլիսի 23-էն մինչեւ 3 օգոստոս 222 հոգի մեռած են: Ռուսիոյ ստողլպապահական իշխանութիւնները հրահանգ ստացեր են հսկել Հնդկաստանէն եկող ուղեւորներուն վրայ:

— Չարը մտադիր է, կըսուի, քաղաքական յանցաւորները Սիպերիա արտօրել տալու գրութիւնը մասամբ ջնջել: Ընդարձակ բանտեր պիտի շինուին Ռուսիոյ մէջ, այդ կարգի դատապարտեալներու համար:

— Կրետէի գիտնորական միջազգային զօրութեան վրայ հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ Թալմը:

Հանեայի մէջ ու չրակայքը՝ վեց տէրութեանց զօրքերէն կան 2223 հոգի. մեծամասնութիւն կը կազմեն ֆրանսացիներն ու իտալացիները: Իզդէտօնի ամրոցը կը գտնուին 150 աւատիական զօրք, ի Բէթիմօ 1100 ռուս զօրք, ի Քանտիա (Հեւաքիօն) 1800 անգլիական ու 300 իտալական զօրք: Դարձեալ 320 իտալական զօրք կը գտնուին ի Հիւրաբէդրա. իսկ ֆրանսական 400 զօրք ի Սիթիա և 100 ի Սքինալօնկա: Այս միջազգային փոքրիկ բանակ կը բաղկանայ ուրեմն 6693 զօրքերէ և ունի երեք լեռնային հրետանի, իտալական՝ ի Հանեա, անգլիական՝ ի Քանտիա և ռուսական ի Բէթիմօ:

Թուրքերն ունին կղզիին մէջ ընդ ամենը 15 վաշտ զօրք, իւրաքանչիւրը 550—600 հոգիէ բաղկացած: Ասկից զատ, երկու հեծելազօրաց գունդ ի Հանեա և գրեթէ 600 պալը պօզուր ի Քանտիա:

— Ռուսիոյ և Ֆրանսայի դաշնակցութեան կարեւորութիւնը զանազան կերպերով կը մեկնուի. ըստ ոմանց, երկու երկիրներէն իւրաքանչիւրը պարտաւոր է օգնել միւսին եթէ յարձակում կրէ այն, բայց ոչ՝ եթէ ինք պատերազմ հրատարակէ: Թալմը կիմանայ Բարիզէն թէ ի Բէդէրհօֆ խորհրդակցութեան գլխաւոր առարկան սա եղեր է թէ ինչպէ՞ս կարելի է չեղզբացնել Անգլիան, եթէ երբեակ նիզակակցութեան յարի:

Միւս կողմէ, Պէրլինի թերթերը կը հաղորդեն թէ Ռուսիոյ ելմտական նախարարութիւնը բանակցութեան սկսած է բարիզեան սեղանաւորներու հետ՝ կէս միլիառ ֆրանքի փոխառութեան մը կնքման համար: (Շատ կանուխ չէ՞):

ՏԵՂԱԿԱՆ

Ամսուս վերջին չաբաթը Եգիպտոս կը վերադառնայ Լորտ Գրումը:

— Միջերկրականի անգլիական նաւատորմին մէկ բաժինը Աղեքսանդրիոյ նաւահանգիստը պիտի այցելէ այս աշնան:

— Սեպտ. 19/31-ի գիշերը Չակագիլի մէջ պատահած անկարգութիւններուն ու արարներուն կողմէ եղած ցոյցերուն վրայ բացուած քննութիւնն աւարտելով, գործը դատական իշխանութեան յանձնուած է: Ծանցաւորները երեսունմէկ հոգի են որոնք պիտի դատուին Չակագիլի մէջ:

Նոյն գիշերը Սիւէզի մէջ պատահած դէպ-

քերուն առթիւ կատարուած քննութեան ալ երեւան ելած է որ, կըսեն տեղական լրագիրը, պատահականաւ թիւնը ստիկանութեան վրայ կը ծանրանայ որ առջի իրիկուրէն տեղեակ էր ըլլալիք ցոյցերուն, բայց զանոնք արգիւելու անփոյթ կեցած էր:

— Այսօր տեղի կունենայ Աղեքսանդրիոյ ելեւթրական թրամուէյլն բացումը:

— Ապուքիւրի ոճիրին առթիւ, որուն զոհ դացած էր Պ. Վէլլ, երիտասարդ անգլիացին, իր ձիապանին հետ, ձերբակալուած են երեք պէտէվներ՝ իբրեւ հեղինակ ու մեղսակից: Քննութիւնը առաջ կը տարուի խստիւ:

— Էմիլիոյն Կագէթ կիմանայ թէ Տամանհուրի կողմը գտնուած երկրագործական հաստատութեան մը տնօրէնը քիչ մնացեր է Պ. Վէլլի տխուր վախճանն ունենար քանի մը օր առաջ: Գիշերանց կառքով դացած ատենը չորս զինեալ պէտէվներ կառքը կեցունելով իր անունը կուտան և կը հարցունեն թէ այդ անձին անցնիլը տեսած էր. կառապանը գուշակելով թէ աւազակներու հետ գործ ունի, կը պատասխանէ թէ վնասուած կառքերուն դեռ Տամանհուր կը գտնուի: Այս պատասխանին վրայ պէտէվները կը հեռանան:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 10 Սեպտ. — Յունաստան հաւանած է ելմտական քոնգրէս. միայն թէ Տէրութիւնը համաձայնած չեն տակաւին թէ պատերազմական տուգանքի առաջին մասնավճարը թեսալիային պարպուեան առաջ պիտի հատուցուի:

ՄԱՏՐԻՏ, 10 Սեպտ. — Քուպայի ապստամբները տիրեցին Վիզիթիոս թուրք բազային: Մեծ յուզում կը տիրէ Մատրիտի մէջ:

ՆԻՒ-ԵՕՐՔ, 10 Սեպտ. — Երկու կառախումբերու միջեւ ընդհարում մը պատահեցաւ Քոլորադոյի նահանգին մէջ: Երեսուն հոգի մեռան:

ՔԷԲ-ԹՕՆ, 10 Սեպտ. — Եօհանսպէրկէն կը հեռագրեն թէ Կօլտիբըլիի հանքերուն տնտեսութի մթերանոցին մէջ սրայթում մը պատահեցաւ: Հինգ ձերմակ և քսանընիւթ սեւաւորթ մեռեր են:

Լ Ս Ա Ր Ա Ն

Կը յիշեցունենք թէ այս գիշեր տեղի կունենայ Ընթերցասիրաց ընկերութեան առաջին լսարանը: Երեկոյթը կը սկսի ժամ 9-ին:

ՕՐԷՆՔԻ ՎՐԱՅ ԳԱՂԱՓԱՐ

2. Contratիև սեւակ եւ usուաքաժաւնոււնեղը

1.—Contratն synallagmatique կամ bilateral կը կոչուի, երբ պայմանագիրը (les contractants) փոխադարձաբար իրարու կը պարտաւորին. զոր օրինակ, վաճառումին մէջ, վաճառողը՝ կը պարտաւորի ստացուածքը տալու, գնողը կը պարտաւորի գինը վճարելու:

Contrat synallagmatiqueը կը բաժնուի,

Ա. parfait (կատարեալ):

Բ. imparfait (անկատար):

Կատարեալ. — Երբ երկու պարտաւորութիւնք միեւնոյն ժամանակին մէջ կը կատարուին. ինչպէս, վաճառումի մէջ, վաճառողը՝ կը պարտաւորի անմիջապէս ստացուածքը տալու, և գնողը՝ նոյնպէս գինը վճարելու:

Անկատար. — Երբ պարտաւորութիւններէն միայն մէկը անմիջապէս կը կատարուի, և միւսին կատարումը կախում կունենայ դէպքէ մը որ գոյութիւն ունի կամ ոչ. զոր օրին-

նակ, աւանդի (dépôt) մէջ աւանդաւորն (le dépositaire)՝ անմիջական կերպով կը պարտաւորի դարձունել աւանդը երբ իրմէն պահանջուի. աւանդատուն (le déposant)՝ կը պարտաւորի աւանդաւորին միայն այն ատեն, երբ այս վերջինը աւանդապահութեան պէտք եղած ծախքերը ընէ, և երբ այդ ծախքերը եղած ըլլան:

2.—Contrat unilatéral կը կոչուի, երբ մէկ կամ աւելի անձեր կը պարտաւորին մէկ կամ աւելի անձերու հանդէպ, առանց վերջիններուն կողմէն պարտաւորութիւն մը ստանձնուած ըլլալու:

Չոր օրինակ, պարգեւ (donation հիպէ)՝ մէջ որ ծախքով ծանրաբեռնուած չէ, պարգեւատուն պարգեւը յանձնել կը պարտաւորի, իսկ պարգեւաւորն՝ ո՛ր և է պարտաւորութիւն մը չի ստանձներ: Նոյնն է գործածածութեամբ սպառող իրերու փոխառութեան (prêt de consommation) համար. փոխառուն՝ երբէք պարտաւորուած չըլլար (տես Code Napoléon. Թոք. 1893):

Unilatéral տեսակէն եղող contratները չփոխելու չէ synallagmatique imparfait տեսակէն եղողներուն հետ, ինչպէս աւանդը, գործածութեամբ չըսպառող փոխառութիւնը (prêt à usage կամ commodat): —Այս երկու տարբեր տեսակներուն միջեւ գտնուող տարբերութիւնը որոշել անօգուտ չէ, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը տարբեր օրէնքներով կը լուծուին: Այսպէս synallagmatique, զոր օրինակ, բոլորովին լուծուած կը համարուի, երբ կողմերէն մէկը իւր պարտաւորութիւնները չը կատարէ. պէտք է այնչափ օրինակ գրուած և ստորագրուած ըլլայ, որչափ որ շահակից կողմը գտնուին: Unilatéralը այս պայմաններէն զերծ է:

3.—Contrat commutatif կը կոչուի, երբ կողմերէն իւրաքանչիւրը կը պարտաւորուի տալ կամ ընել բան մը որ կը համարուի իբրեւ հաւասարազօրը (comme l'équivalent) այդ բանին որ կը տրուի կամ կը ըլլայ իրեն համար:

Այսպէս, վաճառումի մէջ, գինը վաճառողը ապրանքին հաւասարազօրն է, ուրեմն վաճառումը contrat commutatif մըն է:

Սոյն contratին ստորաբաժանումը կը համարուի Contrat aléatoire (aléa լատ. de քուէ կը նշանակէ)՝ փոշուածն, որով հաւասարազօրը կը բաղկանայ կողմերէն իւրաքանչիւրին համար շահու կամ կորուստի բախտ կամ գիպուածէն, անժամօք դէպքի մը համեմատ:

Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

Վնուպեկ ասեցի փաստաբան

Ա. Զ. Դ

Տիկին Սոֆիկ Ազգայեսեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գա. հիւր հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել հայ հաւատարմութեան որ պատրաստ է իր խնամքները տալ իրեն պէժ ունեցողներուն:

Իր երկարամեակեայ փորձառութիւնը եւ խորհմանք աշխատութիւնը զինքն բաղաժիտ առաջնաւ կարգ մանկաբարձերու կարգը կանգնեցնելու:

Իմել Շուպրա, Չամաթի փողոց թիւ 12: Երկուսքի եւ հինգուսքի օրերը առաւօտուն կը գրանուի Սարգիսեան դեղատանը ի Պէն-էլ-Սուրեհն:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ
ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱԶՈՂԼՈՒ
Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու. — Կանխաձեռն արժեթուղթերու վրայ. — Կտան. ձեռք յաճախողներու հաշուին համար դան ձուլներ ընել եզրագրութիւն և արտադրութեան գլխաւոր քաղաքներու մէջ. — Պայմանագրութեամբ արժեթուղթերու, օրինակով պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պոլսի փողոց եզրագրութեան հասցրատան դէմ Բէսսազօղլու գրաստանը:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէքիէ, հայկական պանդոկին քովը տի կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն զեփուարահաճները զօհայնեղու եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն տնօրէնական գիներով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՐՍԵՆԳԻՐԻՑ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսորէն 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսորէն 1, 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էքսորէն կարգ
Գահիրէ	առտ. 4 45	—	7 —	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանիս	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» երեկոյ 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՐՍԵՆԳԻՐԻՑԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսորէն 1 2 կգ.	Խառն 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էքսորէն 1 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էքսորէն կարգ
Աղեքսանդրիա	առտ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանիս	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷՆ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՑ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	7 48	» կայարան	» —	3 30
	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» երեկոյ 1 20	7 5
Չակադիկ	ժամ. 1 34	8 54	Զակադիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (բարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35